ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ՀՐԱՆՏԻ

ՄԱՏԵՆԱԿԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Սուրենի Ներսիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյան

արվեստագիտության թեկնածու, դոցենտ Զարուհի ԱվետիսիՀակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ.մարտի 28-ին, ժամը 12^{00}-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. փետրվարի 26-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

XXI դարում՝ տեղեկատվական անսպառ հոսքի և առցանց շփումների ակտիվացման դարաշրջանում, անձի բազմաբնույթ կարողունակությունների համակարգում կարևորվում է գեղարվեստական կրթության դերը անձի բազմակողմանի, ներդաշնակ զարգացման համար: Այսօր՝ մեդիա և տեղեկատվական, համակարգչային, համացանցային գրագիտության տիրապետման անհրաժեշտությանը զուգահեռ, ազգային ինքնության ճանաչման գերխնդրի լուծման համար առաջնահերթ են դառնում նաև ազգային մշակութային ժառանգությունը ճանաչելու, արժևորելու, պահպանելու կարողությունների զարգացումը, ինչպես նաև գեղարվեստական կրթության մակարդակի բարձրացումն ու բովանդակության արդիականացումը: Արդի ժամանակաշրջանում արժևորվում է մեր դարավոր ազգային արվեստի անքակտելի ու գլխավոր ոլորտներից մեկի՝ մանրանկարչական արվեստի և ՀՀ գեղարվեստական կրթօջախներում դրա ուսուցման դերը սովորողների գեղանկարչական և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման, արժեքային կողմնորոշումների ձևավորման համատեքստում:

Հայկական մանրանկարչական արվեստի գիտական հետազոտության բնագավառում մեծ ավանդ ունեն հայ, ռուս, եվրոպացի, ամերիկացի անվանիգիտնականներ Ս.Տեր-Ներսիսյանը, Լ.Դուռնովոն, Տ. Իզմայլովան, Հ. Հակոբյանը, Է.Կորխմազյանը, Ի. Դրամփյանը, Լ.Զուգասզյանը,Վ.Ղազար-յանը,Ս.Մանուկյանը,Զ. Հակոբյանը, Լ. Զաքարյանը,Կ.Մաթևոսյանը,Դ.Ղազար-յանը, Թ.Ֆ. Մեթյուզը, Ս.Լ. Մերյանը, Ա. Թեյլորը, Հ. Էվանսը, Մ.Վ. Օրնան, Հ. Ութուջյանը, Վ.Ներսիսյանը և ուրիշներ: Անցյալ դարի 50-ականներին ռուս գեղանկարչության խոշոր գիտակ, արվեստագետ Լ.Դուռնովոյի կողմից հայ միջնադարյան մանրանկարչության կրկնօրինակման դպրոցի հիմնադրումը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում նշանակալից ներդրում էր մատենական գեղանկարչական արվեստի հետագա զարգացման համար: Դուռնովոյի դպրոցի ավանդույթները շարունակաբար կիրառվել են Մատենադարանի Ձեռագրերի կրկնօրինակման բաժնում:

Մեր ուսումնասիրությունները և աշխատանքային փորձը Մատենադարանում ցույց են տվել, որ թեև արվեստագիտության ոլորտում առկա են հայկական մանրանկարչական արվեստի ոճական առանձնահատկություններին և պատկերագրությանը նվիրված շատ արժեքավոր ուսումնասիրություններ, սակայն ցայսօր մշակված չեն մատենական գեղանկարչության կատարողական արվեստի տեխնիկայի և ուսուցման մեթոդիկայի վերաբերյալ հետազոտություններ: Գործնականում նկատվում է որոշակի հակասություն. մի կողմից՝ ելնելով կրթության արդիականացման ժամանակակից մոտեցումներից, բարձր պահանջներ են

ներկայացվում ապագա նկարիչ մանկավարժների զարգացման մակարդակի նկատմամբ՝ որպես նրանց մասնագիտական կարողունակության կարևորագույն բաղադրիչի, մյուս կողմից դեռևս լիարժեքորեն չեն կարևորվում մատենական գեղանկարչության կատարողական արվեստի տեխնիկայի և ուսուցման մեթոդիկայի մշակման, դրա արդյունավետության բարձրացման հարցերը: Հակասություններ են ծագում նաև աշխատաշուկայում տարաբնույթ, բազմաշերտ կարողունակություններով օժտված մասնագետների կենսական պահանջի և գործող ավանդական մոտեցումների, ինչպես նաև ժամանակակից կրթական չափորոշիչների պահանջների ու գործող կրթահամակարգի միջև:

Սույն հետազոտության հիմքում ընկած են գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի մշակման արդի խնդիրները, դրանց մեթոդաբանական ու տեխնոլոգիական իմաստավորումը: Կարևորելով թեմայի արդիականությունը՝ փորձ է արվել բացահայտել գեղարվեստական կրթօջախներում սովորողների՝ մատենական գեղանկարչության կատարողական արվեստի տեխնիկայի տիրապետման խնդրում առկա դժվարությունները, մշակել մանրանկարչական գիտելիքների, կատարողական կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ձևերի, մեթոդների, միջոցների, տեխնոլոգիաների համալիր և սահմանել դրա արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները:

Հետազոտության իրականացման համար հիմք են ընդունվել մատենական գեղանկարչության դասական հիմնարար սկզբունքները, միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական նկարազարդումներն ու պատկերագրությունը՝ որպես ուսուցման տեղեկությունների և գիտելիքների հայթայթման միջոց, ինչպես նաև ժամանակակից կրթական նորարարական մոտեցումները, տեխնոլոգիաները՝ որպես սովորողների մասնագիտական և ստեղծագործական կարողությունների զարգացման, գեղարվեստական կրթության արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներ: Այսպիսով, մեր հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթության արդի մարտահրավերներով և հիմնավորված՝ ՀՀ-ում մեր ուսումնասիրած թեմային առնչվող հիմնարար հետազոտությունների բացակայությամբ:

Հետազոտության նպատակը գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկայի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան է:

Հետազոտության գիտական վարկածը

Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում սովորողների կողմից մատենական գեղանկարչության վերաբերյալ տեսական գիտելիքների և կատարողական արվեստի տեխնիկայի սկզբունքների յուրացումն արդյունավետ կիրականանա, եթե.

- ուսումնասիրվեն, վերլուծվեն և որպես մեթոդաբանական հիմք օգտագործվեն հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները,
- բացահայտվեն հայկական միջնադարյան դպրոցներում և համալսարաններում մատենական գեղանկարչության՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը,
- սահմանվեն և բնութագրվեն մատենական գեղանկարչության ուսուցման սկզբունքներն ու տեխնիկական-տեխնոլոգիական առանձնահատկություն-ները,
- որոշարկվեն և սահմանվեն մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները,
- առաջադրվեն մանկավարժական պայմանները, որոնց ապահովման պարագայում արդյունավետ կդառնա մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի կիրառումը,
- մշակվի և փորձարարությամբ հիմնավորվի մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկա:

Հիմք ընդունելով ուսումնասիրության օբյեկտը, առարկան, վարկածը և նպատակը՝ սահմանվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել, վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները և միջնադարյան հայ մանրանկարիչների փորձը,
- բացահայտել հայկական միջնադարյան դպրոցներում և համալսարաններում մատենական գեղանկարչության՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը,
- սահմանել և բնութագրել մատենական գեղանկարչության ուսուցման սկզբունքներն ու տեխնիկական-տեխնոլոգիական առանձնահատկություն-ները,
- որոշարկել և սահմանել մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական

կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները և մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները,

- մշակել մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկա և փորձարարությամբ հիմնավորել այն:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել. հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, արվեստագիտական, մանկավարժական, մեթոդական հետազոտությունները, տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, մանրանկարչական պատկերագրությունը և հայ մանրանկարիչների փորձը, ուսումնական գործունեության տեսությունը (Վ. Վ. Դավիդով,Դ.Բ. Էլկոնին,Վ.Կ.Դյաչենկո,Մ.Ա. Մկրտչյան),կոմպետենտային մոտեցման տեսությունը (Ի.Ա. Զիմնյայա,Վ.Վ.Սաֆոնովա,Վ.Դ. Շադրիկով, Մ. Գ. Աստվածատրյան),մշակութաբանական մոտեցման տեսությունը (Ա.Քամյու, Ն.Բ.Կռիլով,Դ.Բելլ) կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ հետազոտությունները, մեթոդական մշակումները (Վ.Վ.Կուզին, Վ.Ս.Շուբինսկի, Լ.Ս.Ներսիսյան,Ա.Ս. Քեշիշյան, Լ.Ա. Իսկոյան, Ս. Մ. Սարգսյան):

Հետազոտության գիտական նորույթը

- Բացահայտվել և հիմնավորվել են հայկական միջնադարյան դպրոցներում և համալսարաններում մատենական գեղանկարչության՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը:
- Առաջին անգամ տրվել են մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկայի սահմանումն ու նպատակադրումը, ճշգրտվել և սահմանվել են նրա կառուցվածքային բաղադրիչները, սահմանվել և գործածության մեջ են դրվել առարկայի ոլորտին վերաբերող նոր եզրույթներ:
- Սահմանվել և բնութագրվել են մատենական գեղանկարչության ուսուցման սկզբունքներն ու տեխնիկական-տեխնոլոգիական առանձնահատկությունները:
- Որոշարկվել և սահմանվել են մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները:
- Սահմանվել են մանկավարժական պայմանները, որոնց ապահովման պարագայում արդյունավետ է դառնում մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի կիրառումը:
- Մշակվել և գեղարվեստական կրթօջախներում ներդրվել է մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկա, որը ներառում է մատենական գեղանկարչության բովանդակությունը, ուսուցման սկզբունքները, մեթոդները, տեխնիկան և տեխնոլոգիան, մանկավարժական պայմանները, մանրանկարչական և ստեղծագործական առաջադրանքները:

Հետազոտության տեսական նշանակությունը

● Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները և միջնադարյան հայ մանրանկարիչների փորձը:

● Սահմանվել են մատենական գեղանկարչության դասավանդման խնդիրները:

● Առաջարկվել են գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության և կատարողական տեխնիկայի ուսուցման մանկավարժական-մեթոդական նոր մոտեցումներ ու տեսական դրույթներ, որոնք կհարստացնեն գեղարվեստական մանկավարժությունը տեսական-մեթոդաբանական և մեթոդական նոր դրույթներով:

Հետազոտության գործնական նշանակությունը

● Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում ուսանողների մանրանկարչական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ստեղծագործական ընդունակությունների և մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով:

● Հետազոտության տեսագործնական մշակումները կարող են ինքնուրույն դասընթացի նյութ դառնալ բուհական համակարգի մասնագիտական ամբիոններում և կիրառվել մասնագետների վերապատրաստման գործընթացում:

● Մշակված մեթոդիկան գործնական օգնություն կլինի մատենական գեղանկարչություն դասավանդողներին ու մատենական գեղանկարչության դասագիրք կազմող մասնագետներին:

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են **հետազոտության հետևյալ մեթոդները.** տեսական՝ տեսական հետազոտությունների և մանկավարժական առաջավոր փորձի վերլուծման և ընդհանրացման մեթոդներ, էմպիրիկ՝ դիտում, զրույց, սոցհարցումներ, մանկավարժական փորձարարություն, մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ

1.Մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկայի սահմանումը, ըստ որի՝ մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկան մանկավարժական գիտաճյուղ է, որի օբյեկտը մանրանկարչության ուսուցման գործընթացն է գեղարվեստական կրթօջախներում, իսկ առարկան մանրանկարչության ուսուցման առանձնահատկությունների, սկզբունքների, մեթոդների, միջոցների, տեխնոլոգիաների և այդ ոլորտում սովորողների գիտելիքների գնահատման տեսակների ու ձևերի համակարգն է:

2.Մշակված մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան նպաստում է սովորողների՝ մանրանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

3. Մանկավարժական պայմանները, որոնք ներառում են.

- մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացի նախագծման և արդյունավետ իրագործման ստեղծագործական և սոցիալ-մշակութային միջավայրը,
- մատենական գեղանկարչության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և դրանց հիման վրա մանրանկարչական արվեստի կատարողական տեխնիկայի զարգացման տարաբնույթ մեթոդների, տեխնիկաների և տեխնոլոգիաների համադրումը,
- մատենական գեղանկարչության դասական հիմնարար սկզբունքների հաշվառումը,
- մատենական գեղանկարչության ավանդական և ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների միաժամանակյա կիրառումը:

4.Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում մանրանկարչական գիտելիքների հաղորդման և կատարողական տեխնիկայի զարգացման տարաբնույթ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը խթանում է սովորողների իմացական-ճանաչողական ակտիվությունը, ինքնազարգացումը, նպաստում նրանց գեղարվեստական մտածողության և գործունեության զարգացմանը, ազգային գեղանկարչական կրթության որակի բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են աշխատանքի գիտական ապարատով և մեթոդաբանությամբ, գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման փորձի համակողմանի ուսումնասիրությունների արդյունքներով, փորձարարական աշխատանքների տևողությամբ, դրանցում փորձարկվողների լայն ընդգրկվածությամբ, ստացված արդյունքների ընդհանրացմամբ և հանրապետությունում մանրանկարչական արվեստի զարգացման ոլորտում ատենախոսի անձնական ներդրմամբ:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով

Առաջին փուլում (2016-2019թթ.) ուսումնասիրվել և վերլուծվել են հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, արվեստագիտական, մանկավարժական, մեթոդական գրականությունը, տեսական և հայեցակարգային մոտեցումները: Բացահայտվել է հետազոտվող հիմնախնդրի վիճակը մանկավարժության տեսության և պրակտիկայի մեջ, ինչպես նաև փորձարարական բազա հանդիսացած գեղարվեստական կրթօջախների ուսումնական գործընթացում: Սահմանվել են հետազոտության նպատակը, առարկան, վարկածը և խնդիրները: Այս փուլում իրականացվել է արձանագրող փորձարարություն գեղարվեստական կրթօջախներում

ուսանողների՝ «Մատենական գեղանկարչություն» առարկայի գիտելիքների մակարդակը հայտորոշելու նպատակով:

Երկրորդ փուլում (2020-2021թթ.) սահմանվել են հետազոտության մեթոդները, նախագծվել է մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկա, որը ներառել է մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները, մանրանկարչական առաջադրանքների և դասերի ձևերը, սահմանվել են դրանց արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները, այնուհետև իրականացվել են փորձարարական աշխատանքներ՝ առաջադիր աշխատանքային վարկածը ստուգելու նպատակով:

Երրորդ փուլում (2022-2023թթ.) շարունակվել են փորձարարական աշխատանքները, ստուգվել և հիմնավորվել է մատենական գեղանկարչության ուսուցման առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը: Կատարվել են մանկավարժական փորձարարության արդյունքների վերլուծություն, ընդհանրացում, ատենախոսության ձևավորում և վերջնական խմբագրում:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, 120 անուն գրականության ցանկից և հավելվածից: Այն ներառում է 3 աղյուսակ, 9 տրամագիր, 12 գծապատկեր, 3 գծանկար, 7 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 174 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և խնդիրները, առաջադրված է գիտական վարկածը, ներկայացված են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը», բացահայտվել և հիմնավորվել են մատենական գեղանկարչության՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը: Տրվել են մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկայի սահմանումն ու նպատակադրումը: Սահմանվել են մատենական գեղանկարչության դասավանդման խնդիրները:

Երկրորդ ենթագլխում՝ «Մատենական գեղանկարչության ոճական և կատարողական առանձնահատկություններն ու ընդհանրությունները միջնադարյան Հայաստանի տարբեր կրթօջախներում», վերլուծվել են միջնադարյան Հայաստանի մանրանկարչական արվեստի երկու հիմնական ուղղությունները՝ ժողովրդականն (Վասպուրականի դպրոց) ու ազնվականականը (Կիլիկյան դպրոց), բնութագրվել են նրանց ոճական և կատարողական առանձնահատկությունները, ընդհանրությունները: Լուսաբանված են Հայաստանի տարբեր մանրանկարչական դպրոցներում ընդունված պատկերագրական կանոնները, սկզբունքները և պատկերագրման երկու հիմնական՝ պարզ, միաշերտ ու բարդ, բազմաշերտ և այս երկուսի համադրմամբ՝ միջին բարդության եղանակների առանձնահատկությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական մատենական գեղանկարչության ուսուցման միջնադարյան և ժամանակակից սկզբունքների, մեթոդների և տեխնիկաների համեմատական վերլուծությունը», բնութագրվել են հայկական մանրանկարչական արվեստի ուսուցման միջնադարյան և ժամանակակից սկզբունքները, մեթոդները, այդ թվում և մեր առաջարկած հեղինակային մեթոդներն ու տեխնիկաները՝ մանրանկարի գծանկարային եզակի կրկնօրինակման և նոր տարբերակով կրկնակի կրկնօրինակման տեխնիկաները: Պարզաբանված են նրանց առավելություններն ու արդյունավետությունը: Լուսաբանվել են գունային խառնուրդներ պատրաստելու և ջրաներկով աշխատելու կանոնները, ներկայացվել են երփնապատկերի փուլային գունամշակման հաջորդական քայլերը, ֆիգուրների, դեմքերի մոդելավորման տեխնիկաները: Սահմանվել և գործածության մեջ են դրվել առարկայի ոլորտին վերաբերող նոր եզրույթներ՝ եզակի և կրկնակի կրկնօրինակման տեխնիկաներ, ուրվապատկերագրում, գծապատկերագրում, առաջնային երփնապատկեր:

Ատենախոսության՝ «Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ուսուցման գործընթացում սովորողների մանրանկարչական գիտելիքների, կարողությունների և կատարողական հմտությունների արդյունավետ զարգացման մեթոդիկայի բնութագիրը», սահմանվել են մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում մանկավարժի խնդիրները և մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները: Ներկայացված են հետազոտության ընթացքում մշակված մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի կառուցվածքային բաղադրիչները, տրված է դրանց բնութագրերը: Դիտարկված են մատենական գեղանկարչության ուսուցման ավանդական և ժամանակակից մի շարք փոխներգործուն մեթոդներ, տեխնոլոգիաներ: Ներկայացված են մանրա-նկարչական արվեստում սովորողների գծանկարչական, գեղանկարչական

կատարողական և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացմանը նպաստող մեթոդները:

Երկրորդ ենթագլուխը՝ «Մատենական գեղանկարչության ուսումնա-գործնական առաջադրանքներ», բովանդակում է գծանկարչական, գեղանկարչական տեխնիկաների զարգացմանն ուղղված գծանկարային, գունամշակման, մանրանկարչական հորինվածքի ստեղծման կառուցողական, ստեղծագործական և սովորողների գեղագիտական ճաշակի բարձրացման, արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման նպատակով նախագծված առաջադրանք-վարժություններն ու գծապատկերները:

Երրորդ ենթագլխում՝ «Մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետության ստուգումը և արդյունքների վերլուծությունը», սահմանվել են մանկավարժական փորձարարության հիմնական խնդիրները: Ներկայացված է գեղարվեստական կրթօջախներում «Մատենական գեղանկարչություն» առարկայի ուսուցման փորձարարական ծրագիրը: Սահմանվել են մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները: Բնութագրվել է փորձարարության ընթացքը: Փորձարարությունն անցկացվել է երեք փուլով՝ արձանագրող, ձևավորող, ստուգիչ-հավաստող: Փորձարարական աշխատանքներին մասնակցել են Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի Զարդակիրառական արվեստի պետական արհեստագործական ուսումնարանի, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի Գեղարվեստի դպրոցի շուրջ 150 սովորող (75-ը փորձարարական և 75-ը ստուգողական դասարաններում) և 20 մանկավարժ: Արձանագրող փուլում իրականացվել են հարցումներ, նպատակաուղղված մանկավարժական դիտում, զրույց, հարցազրույց, փորձագիտական հարցումներ: Ուսուցման արդյունավետությունը հայտորոշելու նպատակով ուսուցման մեթոդիկայի ու դասերի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանների վերաբերյալ անցկացվել են հարցումներ՝ ուղղված գեղարվեստական կրթօջախներում մանրանկարչություն դասավանդողներին և սովորողներին: Պատասխանների արդյունքների և սովորողների կատարած առաջադրանքների վերլուծությունը ցույց տվեց, որ ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը մանրանկարչության ուսուցման գործընթացում սովորողների և դասավանդողների կողմից նպատակահարմար ու արդյունավետ է գնահատվել, և որ մեր առաջարկած մեթոդիկայով ավելի դյուրին է յուրացնել մանրանկարչական գիտելիքներն ու կատարողական տեխնիկան: Ըստ առաջադրանքների կատարման արդյունքների՝ մանկավարժական փորձարարության ընթացքում բացահայտվել են սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի ձևավորման մակարդակները: Կատարվել են հետազոտության

տվյալների մշակում, քանակական և որակական վերլուծություն, արդյունքների ընդհանրացում: Փորձարարական հետազոտության մաթեմատիկական մշակման արդյունքները ներկայացված են թիվ 2 և 3 աղյուսակներում: Մանկավարժական փորձարարության ընթացքում դիտարկվել են հետևյալ արդյունքները: Եթե ստուգիչ խմբերում՝ փորձի սկզբի համեմատությամբ, փորձի վերջում գրանցված բարձր գնահատականի աճը կազմել է 2-5 %, ապա փորձարարական խմբերում այդ աճը կազմել է 50% և ավելի:

Աղյուսակ 2

Սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը փորձարարական և ստուգողական խմբերում

Մակար-դակներ	Ստուգիչ խումբ 1		Ստուգիչ խումբ 2		Փորձնական խումբ 1		Փորձնական խումբ 2	
	Փորձի սկզբ.	Փորձի վերջ.	Փորձի սկզբ.	Փորձի վերջ.	Փորձի սկզբ.	Փորձի վերջ.	Փորձի սկզբ.	Փորձի վերջ.
Ցածր	26	25	22	18	25	12	24	9
Միջին	54	53	56	55	54	45	56	47
Բարձր	20	22	23	28	21	43	20	44

Աղյուսակ 3

Մշակված մեթոդիկայի կիրառմամբ սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը փորձարարական և ստուգողական խմբերում

Մանրա-նկարչա-կան գի-տելիքնե-րի և կա-տարողա-կան տեխ-նիկայի ձևավոր-ման մա-կարդակ-ները %-ներով	1 փուլ				2 փուլ				3 փուլ			
	փորձա-րարական դասա-րաններ		ստուգողա-կան դա-սարաններ		փորձա-րարական դասարան-ներ		ստուգողա-կան դա-սարան-ներ		փորձա-րարա-կան դա-սարան-ներ		ստուգո-ղական դասարան-ներ	
	1-ին	2-րդ	1-ին	2-րդ	1-ին	2-րդ	1-ին	2-րդ	1-ին	2-րդ	1-ին	2-րդ
Բարձր	42,1	44,7	36,2	37,4	45,2	47,5	38,7	40,3	72,6	74,5	54,2	58,9
Միջին	40,9	38,8	40,5	37,6	36,1	35,6	32,2	35,5	19,5	16,6	25,9	24,6
Ցածր	21,8	16,9	31,6	27,1	13,9	16,5	20,8	22,1	7,9	8,9	19,9	16,5

Մշակված մեթոդիկայի կիրառմամբ մանկավարժական փորձարարության երեք փուլերում ստուգողական և փորձարարական խմբերի սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը ներկայացված է թիվ 1, 2, 3 տրամագրերի տեսքով: Վերջիններս ամփոփում են փորձարարական աշխատանքների արդյունքները:



Տրամագիր 1. Մշակված մեթոդիկայի կիրառմամբ սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը փորձարարական և ստուգողական խմբերում (1-ին փուլ)



Տրամագիր 2. Մշակված մեթոդիկայի կիրառմամբ սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը փորձարարական և ստուգողական խմբերում (2-րդ փուլ)



Տրամագիր 3. Մշակված մեթոդիկայի կիրառմամբ սովորողների մանրանկարչական գիտելիքների յուրացման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի շարժընթացը փորձարարական և ստուգողական խմբերում (3-րդ փուլ)

Ստացված արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց տվեց, որ փորձարարության հավաստող փուլում զգալի դրական շարժընթաց է արձանագրված: Եթե փորձի I փուլի համեմատությամբ III փուլում ստուգիչ խմբերում գրանցված բարձր գնահատականի աճը կազմել է 18-21,5%, ապա փորձարարական խմբերում այդ աճը կազմել է 29,8-30%: Այսպիսով, մեր անցկացրած մանկավարժական փորձարարության և մշակած ուսուցման մեթոդիկայի կիրառման արդյունքում ակնհայտ է սովորողների մանրանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացման առաջընթացը, որով հավաստվում է մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետության բարձրացումը և առաջադիր վարկածի ճշմարտացիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հենվելով Հայաստանի միջնադարյան դպրոցներում և համալսարաններում մանրանկարչական արվեստի դասավանդման բազմադարյա փորձի, մանկավարժական գիտության, մասնավորապես կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի ոլորտում առկա նվաճումների, ինչպես նաև մեր իրականացրած հետազոտության և մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի փորձարկման արդյունքների վրա՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Ուսումնասիրվել, վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները և միջնադարյան հայ մանրանկարիչների փորձը՝ որպես ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմք՝ ի նպաստ սովորողների կողմից մանրանկարչական կատարողական արվեստի տեխնիկայի սկզբունքների արդյունավետ յուրացման:

2. Մեր հետազոտության մեջ պատմագիտական, արվեստագիտական փաստարկների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են միջնադարյան Հայաստանում մատենական գեղանկարչության՝ որպես ուսումնական առարկայի, ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը: Միջնադարյան մանրանկարչական հարուստ փորձի համադրումը կերպարվեստի ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների հետ կարևոր նախապայման է մանրանկարչության ուսուցման գործընթացը արդյունավետ դարձնելու համար:

3. Սահմանվել է «Մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկա» հասկացությունը, ինչպես նաև առարկայի ոլորտին վերաբերող նոր այլ եզրույթներ, ճշգրտվել և սահմանվել են մատենական գեղանկարչության դասավանդման նպատակները, խնդիրներն ու կառուցվածքային բաղադրիչները, ուսուցման սկզբունքներն ու տեխնիկական-տեխնոլոգիական առանձնահատկությունները, որոնք հիմք կհանդիսանան մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան կատարելագործելու համար:

4. Հետազոտության առաջադիր վարկածի ստուգման և խնդիրների լուծման համար մշակվել, փորձարարությամբ հիմնավորվել և գեղարվեստական կրթօջախներում ներդրվել է սովորողների մանրանկարչական կատարողական և ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով մշակված մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկա, որը ներառում է մանրանկարչական և ստեղծագործական առաջադրանքների համալիրը, մատենական գեղանկարչության արդյունավետ ուսուցման հեղինակային մեթոդները, տեխնիկաները, ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաները:

5. Մշակվել է «Մատենական գեղանկարչություն» առարկայի դասավանդման փորձարարական ծրագիր՝ ուղղված մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետության, գեղարվեստական կրթության մակարդակի բարձրացմանը:

6. Սահմանվել են մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական կարողությունների, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկայի ձևավորման և ստեղծագործական առաջադրանքների գնահատման չափանիշները՝ հետազոտության արդյունքների օբյեկտիվ վերլուծության ու գնահատման նպատակով:

7. Որոշարկված և սահմանված մանկավարժական պայմանների ապահովման պարագայում արդյունավետ է դառնում մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի կիրառումը: Մեր առաջարկած մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան նախանշում է առարկայի ուսուցման տեխնոլոգիական-տեխնիկական հնարավորությունները և հասանելի արդյունքները:

Թեկնածուական ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակվել են հետևյալ գիտական հոդվածները.

1.Ամիրջանյան Լ.Հ., Արցախ-Ուտիքի և Նախիջևանի մանրանկարչությունը, ISCIENCE. IN. UA. «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 8 (52), ч. 2, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 29-36.

2. Ամիրջանյան Լ.Հ., Գրքային գեղազարդման արվեստը Վասպուրականում, ISCIENCE. IN. UA.«Актуальные научные исследования в современном мире», Выпуск 9 (53), ч. 3, Переяслав-Хмельницкий, 2019.-с.28-34.

3. Ամիրջանյան Լ.Հ., Գրքի սկզբնավորումը, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 6, (74), ч. 4, Переяслав-Хмельницкий, 2021.-с. 44-52.

4. Ամիրջանյան Լ.Հ., Կիլիկյան Հայաստանի մանրանկարչության արվեստը, ISCIENCE. IN. UA. «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 7 (51), ч. 2, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 36-41.

5. Ամիրջանյան Լ.Հ., Կիլիկյան մանրանկարչության զարգացման համառոտ ակնարկ,Կրթությունը և գիտությունը Արցախում,ամսագիր,Եր., 2017, էջ 66-69:

6. Ամիրջանյան Լ.Հ., Հայ ավանդական գրքային արվեստ. սկզբնավորումը, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 3 (47), ч. 6, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 21-29.

7. Ամիրջանյան Լ.Հ., Ամիրջանյան Ս.Հ., Հայ ավանդական պատկերագրական արվեստը (խորաններ), ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире»,Выпуск 2 (46),ч. 3, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 6-13.

8. Ամիրջանյան Լ.Հ., Հայկական Ավետարանների գեղազարդման արվեստի ժանրերը,ISCIENCE.IN.UA.,«Актуальные научные исследования в современном мире», Выпуск 6 (50), ч.8, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 33-41.

9. Ամիրջանյան Լ.Հ., Հայկական ձեռագրային արվեստի սկզբնավորումը, Կրթությունը և գիտությունը Արցախում, ամսագիր, հմր.1-2,Եր., 2016, էջ 45-51:
10. Ամիրջանյան Լ.Հ., Հայկական մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում հորինվածք (կոմպոզիցիա) ստեղծելու արդյունավետ եղանակներ, Էջմիածին, ամսագիր, Ս.Էջմ., 2021, սեպտեմբեր, էջ 111-121:
11. Ամիրջանյան Լ.Հ., Հայկական միջնադարյան մանրանկարչության հիմնական առանձնահատկությունները, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 5 (49), ч. 8, Переяслав-Хмельницкий, 2019.-с.35-39.
12. Ամիրջանյան Լ.Հ., Ամիրջանյան Ս.Հ., Հայոց գիրն ու գրչության արվեստը, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 4 (96), ч.2, Переяслав-Хмельницкий, 2023.-с. 7-12.
13. Ամիրջանյան Լ.Հ., Մանրանկար պատկերի գծանկարման ուսուցման մեթոդները, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 5 (73),ч.5, Переяслав-Хмельницкий, 2021.-с. 6-10.
14. Ամիրջանյան Լ.Հ., Մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում գծանկարչական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման արդյունավետ մեթոդները, Հայագիտական հանդես, 5 (54), Եր., 2021, էջ 148-160:
15. Ամիրջանյան Լ.Հ., Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդական ցուցումներ, Վանաձորի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր, ամսագիր, Պրակ Ա, 2, Եր., 2021, էջ 448-457:
16. Ամիրջանյան Լ.Հ., Մատենական գեղանկարչության արվեստում ստեղծագործական կարողությունների և հմտությունների արդյունավետ զարգացման մեթոդները,ISCIENCE.IN.UA.,«Актуальные научные исследования в современном мире», Выпуск 9 (77),ч.2, Переяслав-Хмельницкий,2021.-с.6-12.
17. Ամիրջանյան Լ.Հ., Միջնադարյան հայկական մանրանկարչության տեխնիկայի հիմնական սկզբունքներն ու մեթոդները, ISCIENCE. IN. UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 10 (54),ч. 3, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 32-39.
18. Ամիրջանյան Լ.Հ., Ամիրջանյան Ս.Հ., Սյունիքի կրթության և գրչության (ձեռագրային արվեստի) կենտրոնը, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 6 (38), ч. 2, Переяслав-Хмельницкий, 2018.-с. 29-33.
19. Ամիրջանյան Լ.Հ., Սուրբ Գիրքը հայկական ազգային ավանդույթում, ISCIENCE.IN.UA., «Актуальные научные исследования в современном мире», Выпуск 4 (48), ч. 5, Переяслав-Хмельницкий, 2019.-с. 135-142.
20. Amirjanyan L.H, Modern Illuminated Manuscript Gospel as Continuation of Armenian Traditional Book Art, Pontifical Commission for the Cultural Heritage of the Church, Cathedral Workshops on Religious Arts and Crafts, Roma, 2003, pp. 353-359.

АМИРДЖАНЯН ЛИЛИТ ГРАНТОВНА

МЕТОДИКА ОБУЧЕНИЯ КНИЖНОЙ ЖИВОПИСИ В ХУДОЖЕСТВЕННЫХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02-«Методика преподавания и обучения» (изобразительное искусство). Защита диссертации состоится 28 марта, 2024, в 12^{00} часов, на заседании специализированного совета «Педагогика» 020 Комитета по Высшему Образованию и Науке при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования

Сегодня, параллельно с необходимостью овладения медийно-информационной, компьютерной и интернет-грамотностью, формирование и развитие возможностей оценки и сохранения национального культурного наследия, а также повышение уровня художественного образования и модернизация его содержания становятся приоритетными для решения сверхзадачи признания национальной идентичности.

В основу данного исследования положены проблемы разработки методики преподавания искусства книжной живописи в художественных учебных заведениях и их методико-технологическое осмысление. Придавая значение актуальности темы, предпринята попытка выявить трудности в освоении студентами художественной техники искусства миниатюры и разработать технологии формирования исполнительских умений и навыков. Актуальность исследования обусловлена современными задачами образования и обоснована отсутствием фундаментальных исследований по изучаемой нами теме в РА.

Цель исследования-разработать эффективную методику обучения искусства книжной живописи в художественных учебных заведениях.

Задачи исследования

- изучить, проанализировать философские, психолого-педагогические, искусствоведческие теории и концептуальные подходы к проблеме, а также опыт средневековых армянских миниатюристов,
- выявить исторические предпосылки и этапы становления и развития книжной живописи как учебного предмета в средневековых армянских школах и университетах,
- установить и охарактеризовать принципы и технико-технологические особенности обучения книжной живописи,

● определить критерии оценки перцептивно-репродуктивных, графических, живописно-исполнительских технических и творческих способностей учащихся в искусстве миниатюры,

● разработать и экспериментально обосновать эффективную методику обучения книжной живописи.

Научная новизна исследования

● Выявлены и обоснованы исторические предпосылки и этапы становления и развития книжной живописи как учебного предмета в средневековых армянских школах и университетах.

● Впервые даны установка и цели методики преподавания книжной живописи, уточнены и выявлены ее структурные компоненты, определены и введены в употребление новые термины, относящиеся к предметной области.

● Выявлены и охарактеризованы принципы и технико-технологические особенности обучения книжной живописи.

● Установлены критерии оценки перцептивно-репродуктивных, графических, живописно-исполнительских технических и творческих способностей учащихся в искусстве миниатюры.

● Выявлены педагогические условия, при обеспечении которых становится эффективным применение разработанной методики обучения книжной живописи.

● Разработана и внедрена в художественных учебных заведениях эффективная методика обучения книжной живописи, которая включает в себя: содержание, принципы, формы, средства, методы, технику и технологию ее обучения, педагогические условия, задания по миниатюре и творческие работы.

Теоретическая значимость исследования

● Изучены и проанализированы философские, психолого-педагогические, искусствоведческие теории и концептуальные подходы к проблеме, а также опыт средневековых армянских миниатюристов.

● Установлены проблемы преподавания книжной живописи.

● Предложены новые педагогико-методические подходы по обучению книжной живописи и исполнительской технике в художественных учебных заведениях.

Практическая значимость исследования

● Результаты исследования могут быть внедрены в процесс обучения книжной живописи в художественных учебных заведениях с целью развития у студентов знаний, умений, навыков искусства миниатюры, творческих и профессиональных способностей.

● Теоретические разработки исследования могут стать материалом для специализированных курсов кафедр вузовской системы и использоваться в процессе переподготовки специалистов.

• Разработанная методическая система предназначена преподавателям книжной живописи и авторам учебников по книжной живописи.

Структура и объем исследования

Диссертация состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. Она содержит 3 таблицы, 9 диаграмм, 12 графических изображений, 3 рисунка и 7 картин. Общий объем работы составляет 174 компьютерных страниц. Основные результаты исследования опубликованы в двадцати научных статьях.

LILIT AMIRJANYAN

METHODOLOGY OF TEACHING MANUSCRIPT ILLUMINATION IN ART EDUCATION CENTRES

Dissertation for the PhD degree in Pedagogical Sciences in speciality area 13.00.02 - "Methodology of Teaching and Learning" (Fine Arts).

The defence will be held on 28 March, 2024, at 12^{00}, at the session of Specialised Council "Pedagogy" 020 of the Higher Education and Science Committee to be held at the Armenian State Pedagogical University after Kh. Abovian (Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets.

SUMMARY

The relevance of the research

Today, in parallel with the need to master media and information, computer and internet literacy, the formation and development of opportunities for evaluation and preservation of national cultural heritage, as well as improvement of the level of art education and modernisation of its content become priorities for solving the super task of recognition of national identity.

This study is based on the problems of developing the methodology of teaching manuscript illumination in art education centres and their methodological and technological comprehension. Giving importance to the topic's relevance, an attempt has been made to identify the difficulties in the students' mastery of the artistic technique of miniature art and develop technologies to form performing abilities and skills. The relevance of the research is conditioned by the modern challenges of education and justified by the lack of fundamental research concerning the topic we are studying in RA.

The aim of the research is to develop an effective methodology for teaching manuscript illumination in art education centres.

The objectives of the research

• to study and analyse philosophical, psychological, pedagogical, art theories and conceptual approaches to the problem, as well as the experience of medieval Armenian miniaturists,

• to identify the historical prerequisites and stages of formation and development of manuscript illumination as an educational subject in medieval Armenian schools and universities,

• to establish and characterise the principles and technical and technological peculiarities of teaching manuscript illumination,

• to determine and establish criteria for evaluating students' perceptual-reproductive, graphic, pictorial-executive technical and creative abilities in the art of miniature painting, and the pedagogical conditions,

• to develop and experimentally substantiate an effective methodology for teaching manuscript illumination.

Scientific novelty of the research

• The research reveals and substantiates the historical prerequisites and stages of formation and development of manuscript illumination as an educational subject in medieval Armenian schools and universities.

• For the first time, the setting and goals of manuscript-illumination teaching methodology are provided in line with the respective structural components – clarified and established with the new terms related to the subject area.

• The principles and technical and technological features of teaching manuscript illumination are duly identified and exposed.

• The research establishes the criteria for evaluating students' perceptual-reproductive, graphic, pictorial-executive technical and creative abilities in miniature art.

• The pedagogical conditions have been identified while ensuring what becomes an effective application of the developed methodology of teaching manuscript illumination.

• An effective methodology for teaching manuscript illumination, including content, principles, forms, means, methods, pedagogical conditions, techniques and technology for teaching miniature art and creative work, has been developed and implemented in art education centres.

The theoretical significance of the research

• The philosophical, psychological, pedagogical, art theories and conceptual approaches to the problem and the experience of medieval Armenian miniaturists have been studied and analysed.

• The problems of teaching manuscript illumination have been established.

• New pedagogical and methodological approaches and theoretical provisions for teaching miniature art and performance techniques in art education centres are set forth.

The practical significance of the research

- The research results can be implemented in the process of teaching manuscript illumination in art education centres to develop students' knowledge, skills of miniature art, and creative and professional abilities.
- Theoretical developments of the research are convertible into materials for specialised university courses–applicable in specialists' professional enhancement.
- The developed methodological system might become a practical guide for teachers of manuscript illumination and authors of textbooks on manuscript illumination.

Research scope and structure

The thesis includes an introduction, two chapters, conclusions, a bibliography (reference list) and appendices. It contains 3 tables, 9 diagrams, 12 graphics, 3 drawings and 7 pictures.The total volume of the work is 174 computer pages. Twenty scientific articles have been published on the topic of the research.